ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԷՋՄԻԱԾՆԱՊԱՏԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ ԵՎ «ՁԵՌԱՑ ՄԱՇՏՈՑԻ» ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (1858 թ.)*

Շուշի քաղաքում տպագրությունը սկիզբ է առել 1828 թ., որի նախաձրյալը Շվեյցարիայի Բազել քաղաքի Ավետարանական քարոզչական ընկերության գործունեությունն էր տարածաշրջանում[1]: 1837 թ. Շուշիում ծավալած գործունեության դադարից հետո բողոքական քարոզիչների տպարանը գնում է Ղարաբաղի թեմի առաջնորդ Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանցը: Վերջինս մտադիր է եղել իր մահից հետո տպարանը կտակել Ղարաբաղի հայոց թեմին[2]: Սակայն 1854 թ. Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի հանձնարարությամբ Շուշի ժամանած Գևորգ եպիսկոպոս Վեհապետյանցին[3] հաջողվեց տարհամոզել մահվան մահճում գտնվող Բաղդասար արքեպիսկոպոսին. կաթողիկոսը նրան կարգադրել էր կարգավորել թեմական առաջնորդի սեփականության հարցերը, ինչի արդյունքում էլ նա տպարանը կտակեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Բաղդասար Հասան-Ջալալյանցի ցանկությունն էր, որ կաթողիկոսի բարեհաճությամբ այնտեղ տպագրվելիք գրքերում տպարանի անունը նշվեր հետևյալ կերպ. «Տպեցաւ գիրքս՝ այս անուն՝ ի տպարանի կաթողիկէ Էջմիածնի, ընծայելոյ յԱղուանից Տէր-Բաղդասար Բարձր-Սրբազան մետրապոլիտ արքեպիսկոպոսէն Հայոց Հասան-Ջալալեանց և Ասպետէ»: 1854 թ. հունիսի 27-ին Բաղդասար մետրոպոլիտը կնքեց իր մահկանացուն[4]:

Երեք տարի առաջնորդական աթոռը թափուր մնալուց հետո՝ 1857 թ., Ղարաբաղի թեմի առաջնորդի պաշտոնակատար է նշանակվում վերը հիշատակված Գևորգ եպիսկոպոսը[5]: Նրա պաշտոնավարման ժամանակ, ի տարբերություն իր նախորդի կառավարման տարիներին, այդ տպարանը չունեցավ բեղուն գործունեություն: Գևորգ եպիսկոպոսի թեմակալության տարի-

---

** Ներկայացվել է 22.XII. 2021 թ., ընդունվել է տպագրության 20.I. 2022 թ.:*

[1] Մանրամասն տե՛ս Ս. Պետոյան. Բազելյան բողոքական քարոզիչների՝ Շուշիում հիմնադրած տպարանի պատմությունը (1827–1835 թթ.). – «Հայագիտության հարցեր» (Երևան), 2021, № 1, էջ 45–65:

[2] Մանրամասն տե՛ս Ս. Պետոյան. Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանցը և Շուշիի հայկական տպագրությունը,– «Էջմիածին», մաս Ա., 2021 (յուլիս), թիւ Է., էջ 88–102, մաս Բ., 2021 (սեպտեմբեր), թիւ Թ., էջ 78–94:

[3] 1854 թ. փետրվարի 19-ին Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի հրամանով Գևորգ եպիսկոպոսը նշանակվել էր Ղարաբաղի և Շամախիի եկեղեցական գործերի քննիչ [տե՛ս Տ. Գէորգ արքեպիսկոպոս Վեհապետեանց [մահախոսական]. – «Արարատ», թիւ Զ. (յունիս 30), 1882, էջ 264 (ի դեպ, ամսագրի էջակալության մեջ կան տպագրական վրիպակներ. այսպես, օրինակ՝ 264-րդ էջի վրա տպագրվել է 164)]:

[4] Լէօ. Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի 1838–1913, Թիֆլիզ, 1914, էջ 167, 172, 176:

[5] Տ. Գէորգ արքեպիսկոպոս Վեհապետեանց [մահախոսական], էջ 264:

ներին Շուշի քաղաքի էջմիածնապատկան տպարանում տպագրվեց ընդամենը երկու գիրք, որոնցից առաջինը 1858 թ. «Ձեռաց Մաշտոցն» էր, իսկ երկրորդը՝ Միքայել վարդապետ Զամչյանցի քերականության դասագիրքը[6]: Հենց Գևորգ եպիսկոպոսի նախաձեռնությամբ էր[7], որ արմատներով Թիֆլիսեցի, մոսկվաբնակ գործարար Հովհաննես Հովնանյանցը 1859 թ. հիշյալ տպարանին է նվիրել տպագրական սարքավորումներ և տառատեսակներ[8]:

Նկատենք, որ Գևորգ եպիսկոպոսը թեմում աչքի ընկավ մի շարք չարաշահումներով, որոնց մի մասը վերաբերում էր գրքերի տպագրության ընթացքին, թեմի կարիքների համար նոր գրքերի գնումներին և տպագրված գրքերի վաճառքին: Թեմակալ առաջնորդին պաշտոնից հեռացնելուն[9] նպաստեցին նաև վերը հիշատակված «Ձեռաց Մաշտոցի» տպագրությանը և հետագա սպառմանն առնչվող ապօրինությունները: Այս մասին տեղեկանում ենք Էջմիածնի Սինոդին ուղարկված Ղարաբաղի կոնսիստորիայի գրությունից, որից պարզ է դառնում՝ Գևորգ եպիսկոպոսը գարտուղի ճանապարհներով ավելի շատ է տպագրել «Ձեռաց Մաշտոցը», քան նախատեսված էր, իսկ ավելացած տպաքանակը գաղտնի է պահել՝ ծառայեցնելով իր անձնական շահերին:

Կոնսիստորիան ի մի է բերում «Ձեռաց Մաշտոցի» տպագրության ընթացքում թույլ տրված չարաշահումների վերաբերյալ փաստերը և մի ընդարձակ գրությամբ ուղարկում Սինոդին, որի հիմքում ընկած էին Ղարաբաղի հայոց թեմի հոգևոր գործերի քննիչ Դանիել վարդապետ Շահնազարյանցի կատարած քննություններն ու բացահայտումները: Վավերագիրը միաժամանակ արժեքավոր տեղեկություններ է պարունակում XIX դարի կեսերին Շուշիում գրահրատարակչական գործի ընթացքի վերաբերյալ: Մասնավորապես տալիս է այն հարցերի պատասխանները, թե որոնք էին այդ շրջանում տպագրական դժվարությունները, ինչպես էր ձևավորվում գրքերի ինքնարժեքը, և դրանց վաճառքից որքան եկամուտներ էին գոյանում, ինչ սահմաններ էր ընդգրկում գրքերի տարածումը և այլն:

Ստորև առաջին անգամ[10] հրապարակվող վավերագիրը պահվում է Հայաստանի ազգային արխիվում: Այն հրատարակության պատրաստելիս հա-

---

[6] *Մ. Զամչեանց. Քերականութիւն Հայկազեան լեզուի, երրորդ տպագրութիւն, Շուշի, 1859: Դասագրքի տպագրության և տնօրինման հետ կապված հարցերի շուրջ տե՛ս Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ., Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813–1933 թթ.), կազմեց՝ Սանդրո Բէհբուդեան, Երեւան, 2001, էջ 268–269:*

[7] *Լ է օ. նշվ. աշխ., էջ 302:*

[8] *«Մեղու Հայաստանի» (Թիֆլիզ), 04. VII. 1859, թիւ 27, էջ 211, «Համբաւաբեր Ռուսիոյ» (Մոսկուա), 28. III. 1864, թիւ 61, էջ 2:*

[9] *Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսը 1860 թ. հուլիսի 23-ի կոնդակով Գևորգ եպիսկոպոսին արձակեց Ղարաբաղի թեմի առաջնորդի պաշտոնակատարի պարտականություններից [տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 56, ց. 1, գ. 3909, թ. 101]:*

[10] *Վավերագիրը բացակայում է հետևյալ հրատարակություններից՝ Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ., Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԹ., Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1649–1917 թթ.), հ. Բ., կազմեց՝ Գոհար Աւագեան, Երեւան, 2017, Վաւերագրեր Հայ եկեղե-*

բազատ ենք մնացել բնագրին՝ պահպանելով ուղղագրությունն ու կետադրությունը, իսկ պատվագրությունները (հապավված բառեր) վերականգնել ենք ուղիղ փակագծերի մեջ: Ըստ անհրաժեշտության՝ կատարել ենք նաև ծանոթագրություններ[11] *(ընդգծումները վավերագրինն են):*

ՍՏՅՈՊԱ ՊԵՏՈՅԱՆ

’Ի ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴՆ Ս[Ր]Բ[Ո]Յ ԷՋՄԻԱԾՆԻ ՎԻՃԱԿԱՅԻՆ[12] ՀԱՅՈՑ ԿԱՆՍԻՍՏՕՐԻՒՆ ՂԱՐԱՊԱՂՈՒ[13] ՅԱՅՏԱՐԱՐՈՒ[Թ]Ի[ՒՆ]

’Ի Կանսիստորիիս յայսմիկ լուան զգեկուցումն քննիչն Հոգևոր գործոց Վիճակիս Ղարապաղու Բարձր Արժանապատիւ Դանիէլ վարդապետն Շահնազարեանց գրութեամբ իւրով, ’ի 23 անցե[ա]լ Դեկտեմբերի № 22, ’ի միջի այլոց առաջին պարբերութեամբն խնդրէ ’ի Կանսիստորիէս հասուցանել

ցու պատմութեան, գիրք Ի., Ս. Էջմիածինը եւ հայոց գրերի գիւտի 1500 ու տպագրութեան 400 ամեակների տօնակատարութիւնը 1912–1913 թթ., կազմեց՝ Գոհար Աւագեան, Էջմիածին, 2019: Վերջինիս հավելվածում տեղ են գտել նաև XIX դարում և XX դարասկզբին Ս. Էջմիածնի և թեմերի տպագրական գործունեությանն առնչվող մի շարք կարևոր վավերագրեր:

[11] *Վավերագրում հիշատակվող եկեղեցական և աշխարհական տարբեր անհատների մասին կենսագրական տվյալները հիմնականում բացակայում են, ուստի նրանց մեծ մասի համար հնարավոր չէ տալ առանձին ծանոթագրություններ:*

[12] *«Վիճակ»-ը եպիսկոպոսական թեմ է, որի առաջնորդը ոչ թե ընտրվում է, այլ նշանակվում:*

[13] *1836 թ. մարտի 11-ին Նիկոլայ I ցարի հրամանագրով հաստատվել էր «Պոլոժենիե»-ն* («Положение об управлении делами Армяно-Григорианской церкви в России»)*՝ «Բարձրագոյն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ’ի Ռուսաստան» վերնագրով: Այս օրենքով Ռուսական կայսրությունում կազմվում էին Հայ Առաքելական եկեղեցու վեց թեմերը, որոնցից էր նաեւ Ղարաբաղի (Արցախի) թեմը՝ Շուշի առաջնորդանիստ կենտրոնով (տե՛ս Բարձրագոյն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ’ի Ռուսաստան, Էջմիածին, 1836, գլուխ 4, յօդուած 56): Նախկին Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսության ենթակա շրջաններում Էջմիածնի կաթողիկոսության իրավասության ներքո կազմավորվել էր Ղարաբաղի առաջնորդական թեմը՝ Դիզակ, Վարանդա, Բերդաձոր, Խաչեն, Ջրաբերդ, Գյուլիստան, Շաքի, Կապաղակ, Հաջի, Խենի, Կամբեճան, Արաշ (Արեշ), Լենքորան (Լանքարան) գավառներով, ինչպես նաև Շամախու առաջնորդական թեմը՝ Դերբենդի (Դարբանդ), Ղուբայի, Շամախու, Բաքվի, Սալյանի և հարևան գավառներով: Բացի առաջնորդական երկու թեմերից՝ կազմավորվել էր նաև Թիֆլիսի կոնսիստորիային ենթակա մեկ «յաջորդական վիճակ» (փոխանորդական թեմ), որի կենտրոնն էր Ելիզավետպոլ (Գանձակ) քաղաքը (տե՛ս Հ. Սվազյան. Աղվանից կաթողիկոսություն.– Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 43):*

ինքեան զտեղեկութիւնս, թէ՝ 'ի տպարանի Վիճակիս Ղարապաղու քանի՞ հատոր մաշտոց[14] մատեանք են տպագրեալ, ե՞րբ, ո՞յր հրամանաւ և թոյլտուութեամբ քանի՛ՔՆ ի նոցանէ ցարդ անցուցեալ են 'ի վաճառ, և ո՞րքան գնով, իւրաքանչիւրն 'ի նոցանէ ո՞րքան ծախուք են կազմեալ, իսկ անվաճառ մնացեալ ցարդ նոյնպիսի մատեանքն ո՞ւր գտանին, ո՞վ է ստացեալ զդրամսն վաճառեալ մաշտոցացն, և գիտէ՞ արդեօք Կանսիստորիայս, զի նախկին վիճակաւոր Առաջնորդն Ղարապաղու Սրբազան Գէորգ Եպիսկոպոսն 'ի հաշուոյ տպագրելի մաշտոցաց թոյլատրեալ է տպագրել յօգուտ ինքեան աւելորդութեամբ նա՛և զ500 հատորս 'ի մատենից անտի: Եւ 'ի վախճանի այսր գրութեան քննիչն խնդրէ հաղորդել առանց քողարկութեանց՝ եթէ յայտնի իցեն Ատենակալաց Կանսիստորիիս արտաքոյ գործոց, նաև զայլ հանգամանս, վերաբերեալս առ յիշատակեալ առարկայսն: Եւ զտեղեկութիւնս 'ի գործոց Կանսիստորիիս, յորոց երևի, նախ՝ թէ՝ Հոգևոր Ատեանս՝ նկատելով, զի բազումք յեկեղեցեաց և 'ի հոգևորականաց Վիճակիս Ղարապաղու և այլոց Վիճակաց ունին զզգալի կարօտութիւն ծիսարան կամ մաշտոց անուանեալ եկեղեցական գրքուկաց, խնդրեալ էր 'ի Լուսաւորչական Հայոց Սինոդէդ Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի, 'ի 18 Օգոստոսի 1855 ամի ընդ հ[ա]մ[ա]ր[ա]ւ 467, շնորհել զլուծումն առ 'ի տպագրել տալոյ 'ի տպարանի հանգուցեալ Մետրապոլտին Բաղտասարայ, ընծայելոյ նովաւ Մայր Աթոռոյն Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի, զհինգ հարիւր հատորս ըստ օրինակի մաշտոցին, տպագրելոյ 'ի նոյն իսկ տպարանի 'ի 1840 ամի[15], այնու՝ զի ծախքն նոցունց հոգացեալ լիցի 'ի Վիճակային արդեանց, որ ըստ դատման Կանսիստորիիս չունէր առաւելուլ քան զերկու հարիւ ռուբլիս արծաթեայ, և յետ վաճառմանն վերադարձուցեալ լիցի այն գումար ծախուց 'ի լրումն Վիճակային արդեանց, իսկ վասն մնացեալ օգտին թողեալ էր բարեհաճութեան Սինոդիդ Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի տնօրինել, որպ[է]ս զիա՛րդ և արժան դատիցի: Ուստի և Սինոդդ հրամանաւ 'ի

---

[14] Անվանաթերթի վրա՝ «Ծիսարան որ կոչի Մաշտոց»: Յորում աւանդին ս[ր]բ[ա]գ[ա]ն արարողու[թ]ի[ւն]ք Առաքելական ս[ուր]բ եկեղեցւոյս Հայաստանեայց: Ի ժամանակիս Թէմական կառավարչու[թ]ե[ան] Առաջնորդական գործոց Վիճակին Ղարաբաղու Բարձր Եպիսկոպոսի Վեհապետեան և Ասպետի: 'Ի Տպարանի Շուշւոյ, ընծայեցելոյ Մայր Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի 'ի հանգուցե[ա]լ Բարձր Սրբազան Մետրապոլիտ Բաղտասար Արք Եպիսկոպոսէն Հասան-Ջալալեանց: Երկրորդ տպագրութիւն: 1858 'Ի Շուշի – ՌՅԷ: Անվանաթերթի դարձերեսին՝ «Հրամանաւ Հայոց Սինհոդոսին Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի»:

«Մաշտոց» ծիսամատյանը պարունակում է ծիսական արարողությունների կարգերն ու աղոթքները, որն, ըստ կիրառության, բաժանվում է երեք տեսակի. «Ձեռաց կամ Փոքր Մաշտոցը» պարունակում է քահանային վերապահված խորհուրդներն ու արարողությունները, «Մայր Մաշտոցը»՝ եպիսկոպոսինը, իսկ «Հայր Մաշտոցը»՝ կաթողիկոսինը (տե՛ս Մ. Օրմանեան. Ծիսական բառարան, Անթիլիաս, 1979, էջ 154): Ուստի «Փոքր Մաշտոցը», լինելով քահանաների ձեռքի («ձեռաց») ամենօրյա ծիսարանը, հայ տպագրության պատմության մեջ ունեցել է շատ հրատարակություններ՝ համեմատաբար մեծ տպաքանակով:

[15] Խոսքը վերաբերում է 1840 թ. Շուշիում Բաղդասար արքեպիսկոպոսի տպագրած «Ձեռաց Մաշտոցին» («Ծիսարան որ կոչի Մաշտոց: Յորում աւանդին ս[ր]բ[ա]գ[ա]ն արարողու[թ]ի[ւն]ք ազգիս ըստ սահմանադրու[թ]ե[ան] ս[ուր]բ եկեղեցւոյս Հայոց»):

11 Հոկտեմբերի 1857 ամի ընդ Հ[ա]մ[ա]ր[ա]ւ 1923, պատուիրեաց Կանխատօրիխս տպագրել տալ 'ի յիշեալ տպարանին զհազար հատ մաշտոցս, յորոց զհինգ հարիւրն հաստւցանել 'ի Սինօդդ և զմնացեալ կէսն թողուլ 'ի Կանխատօրիխս վասն վաճառման 'ի լրումն պակասութեան եկեղեցեաց Թեմիս: <u>Երկրորդ</u>՝ յետ այսորիկ՝ նախկին Առեննապետն Կանխատօրիխս Գէորգ Եպիսկոպոսն և միւս Առեննակալքն յայտնեցին թէ՝ որովհետև Հոգևոր Ուսումնարանն Հայոց Վիճակիս Ղարապաղու չունի զգումար ինչ նշանաւոր առ պահպանութիւն ինքեան, և հա՛րկ է 'ի գործ դնել զամենակերպ միջոցս առ 'ի գտանել զաղբիւրս արդեանց յօգուտ այնորիկ, վ[ա]ս[ն] [որո]յ և հարկաւոր դատեցաւ, զի տպագրելի մաշտոցքն լիցին հազար երկու հարիւր յիսուն հատ, այնպ[է]ս՝ զի 'ի նոցունց հինգ հարիւր հատն մատուսցի Սինօդիդ, և մնացեալ եօթն հարիւր յիսուն հատքն վաճառեսցին 'ի վերայ եկեղեցեաց և եկեղեցականաց Վիճակիս և այլոց ցանկացողաց, և 'ի դրամոցն 'ի ձեռս բերելեաց 'ի վաճառոյ անտի՝ զումարն 'ի գին հինգ հարիւր հատորոցն դարձուսցի 'ի լրումն Վիճակային արդեանց, ծախելեաց 'ի տպագրութիւն և 'ի պատրաստութիւն այնոցիկ մատենից, և յաւելեալքն թողեալ լիցին յօգուտ տպարանին վասն ապագայ հարկաւորու[թ]ե[ան] Նորին, իսկ գին 250 հատորոցն դարձուսցի յօգուտ Հոգևոր Ուսումնարանին Ղարաբաղու[16]: Վ[ա]ս[ն] [որո]յ և Կանխատօրիայս 'ի 5 Փետրվարի 1858 ամի օրագրական սահմանադրութեամբ իւրով տնօրինեաց տպագրել տալ զյիշեալ 1250 հատոր մաշտոցսն ընդ ձեռն Շուշաքաղաքացի Խաչատուր քահանային Ղալաբէկեանց[17], որ էր տպագրիչ յայնմ տպարանի, օգնականութեամբ և գործակցութեամբ տիրացու Իսահակայ Մախմուրեանց և տիրացու Թէոսայ Տ[է]ր Ա[ստուա]ծատրեան, նշանակելով 'ի սնունդ և 'ի կառավարութիւն նոցա 'ի տարին՝ առաջին երկուցն իւրաքանչիւրումն 75 րուբլի. և 5. չեթվերթ[18] ցորեան, իսկ վերջնոյն 40 րուբլի. և 3. չեթ. ցորեան: Ուստի և յիշեալ Խաչատուր քահանայն և միւս երկու օգնականքն ն[ո]ր[ա] ձեռնարկին յայնժամ 'ի տպագրել զնշանակեալ 1250. հատոր մաշտոցսն, և՝ ո[ր]պ[էս] յայտնեն Անդամք Կանխատօրիխս, 'ի տիպ անցուցին նոքա զութ տետրակս[19] այնց գրքուկաց: <u>Երրորդ</u>՝ յայսմ միջոցի նախկին պաշտօնակատարն

---

[16] *Նկատի ունի Բաղդասար մետրոպոլիտի ջանքերով 1838 թ. հիմնադրված Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցը, որն իր գործունեության ընթացքում (1838–1920 թթ.), երբեմն ընդմիջումներով ու վայրիվերումներով, անուրանալի դերակատարություն է ունեցել ոչ միայն Արցախի, այլև, առհասարակ, արևելահայ կրթական կյանքում:*

[17] *Խաչատուր քահանա Ղալաբեկյանցը (1817–1904) Շուշիի ամենահին շրջանի տպագրիչներից էր, ով իր տպագրական գործունեությունն սկսել էր դեռևս 1845 թվականին Բաղդասար Հասան-Ջալալյանցի տպարանից (տե՛ս Լ է օ. նշվ. աշխ., էջ 126):*

[18] *Ռուսերեն* «четверть» *(«քառորդ») բառը բնագրում գործածված է հայերեն տառադարձությամբ («չեթվերթ»): Այն հավասար էր որևէ չափական միավորի (փութ, լիտր և այլն) ¼ մասին (տե՛ս Ռուս-հայերեն բառարան, հ. 4, Երևան, 1958, էջ 680):*

[19] *Նկատի ունի ութ մամուլ: 1858 թ. Շուշիում տպագրված «Ձեռաց Մաշտոցը» կազմված է 41 տպագիր մամուլից (502 էջ):*

Վիճակաւոր Առաջնորդի Թեմիս Ղարաբաղու Գէորգ Եպիսկոպոսն 'ի բաց կացուցանելով զյիշեալ Խաչատուր քահանայն և զնշանակեալ երկուս օգնականս նորա յայնմ գործոյ, դաշնադրեաց յիւրմէ կողմանէ միայն ընդ Շուշաքաղաքացի Գրիգորի Խաչատրեանց, որպէս զի նա իւրով սեպհական ծախուք տպագրել տացէ 'ի յիշեալ տպարանին զ1250 մաշտոցսն իւրաքանչիւր հատն 90. կոպէկօք արծաթեայ ընդ ձեռն Շուշաքաղաքացի տպագրիչ Մինասայ Տառղլիճեանց[20], որով և խափանեցան կագադրու[թ]ի[ւն]քն, արարեալք 'ի կողմանէ Կանսիստորիս վասն տպագրութեան նոյն մաշտոցաց: Զորը[ոը]դ՝ յետ բոլորովին աւարտման տպագրութեան այսոցիկ գրքուկաց ընդ անմիջական տեսչութեամբ Նորին Սրբազնութեանն և հետևաբար վասն այնոցունց արարեալ 'ի կողմանէ իւրմէ կարգադրութեանցն՝ Նորին Սրբազնութիւնն տուե[ա]լ է Կանսիստորիս զառաջադրութիւն իւր յ31. Յունվարի անցեալ 1859 ամի ընդ հ[ա]մ[ա]ր[ա]ւ 11, յորում նա գրեալ է այսպէս՝ «Թէև Վիճակային Կոնսիստորիայդ օրագրական եզրակացութեամբ իւրով, կայացելով 'ի 5 Փետրվ[ա]րի անցեալ 1858 ամի տնօրինեալ էր սկզբնաւորել զտպագրութիւն 1250 մաշտոց գրքուկաց 'ի Շուշւոյ Տպարանին Մայր Աթոռոյ Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի՝ ընծայելոյ 'ի Մետրապոլտէն Բաղտասարայ Հասան-Ջալալեանց ծախուք Վիճակային արդեանց, այլ ըստ որում յընթացս այնր ամի չէին բաւական ընկալեալ արդիւնք վիճակին 'ի ծածկել զանհրաժեշտ ծախսն Վիճակին յընթացս նոյն ամի, վ[ա]ս[ն] [որո]յ ես խորհրդով Ատենակալաց Դորին 'ի 1. Մարտի պայման եմի ընդ Շուշաքաղաքացի Աղայ Գրիգորի Խաչատրեանց, առ 'ի տպագրել զնոյնաքանակ մաշտոցսն 'ի յիշեալ Տպարանի սեպհական ծախուք Նորին 'ի միջոցի վեց ամսոց այնու՝ զի նա յաւարտ տպագրութեանն զ1250 մաշտոցս յանձնարարեալ ինձ, ընկալցի յինէն առ իւրաքանչիւր հատորսն իններսուն կոպէկս արծաթոյ: Կատարեալ վերտառեալ Պ[ա]ր[ո]ն Խաչատրեանցին զիւր պայմանեալ խոստումն յանձնեաց ինձ լրիւ զ1250 հ[ա]տ մաշտոցսն, յորոց ես ընդ գրութեանց իմոց 'ի 25 Օգոստոսի նոյն ամի № 107, 106 և 110, առաքեցի առ յաջորդն[21] Շաքւոյ[22] հարիւր հատ, առ գործակալն[23] Վարանդայ հարիւր քառասուն հատ.

---

[20] *Շուշեցի Մինաս Տառղլիճյանցը 1840-ականների վերջերից Շամախիում գործող «Երից ընկերացն Մովսիսի Զօհրապեանց, Մինասի Տառղլիջեանց եւ Մարգարէի Ղուլիեանց» տպարանի համահիմնադիրներից էր, ապա՝ սեփականատերը: Հետագա տարիներին Մ. Տառղլիճյանցը միայնակ տնօրինեց տպարանը, իսկ 1851 թ. հունիսին Կովկասի փոխարքան նրան թույլատրեց իր տպարանը Շամախիից տեղափոխել Շուշի (տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3269, թ. 5):*

[21] *Առաջնորդի փոխանորդ գավառական քաղաքում (տե՛ս Ստ. Մալխասեանց. Հայերէն բացատրական բառարան, հ. 3, Երեւան, 1944, էջ 393):*

[22] *1846 թ. ռուսական իշխանությունները Շաքիի գավառը համանուն կենտրոնով վերանվանել էին Նուխի [տե՛ս Գ. Ստեփանյան. Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի Նուխի և Արեշ գավառների ու Բաքվի նահանգի հայ բնակչության պատմաժողովրդագրական համառոտ ակնարկ. – «Արևելագիտության հարցեր» (Երևան), 2015, № 9, էջ 224] :*

[23] *Հոգևոր գործակալներն անմիջական շփումներ ունեին ժողովրդի հետ, ծանոթ էին թեմի անցուդարձին և եկեղեցական ցածր պաշտոնյաների ու հոգևոր բարձրագույն իշխանության միջնորդներն էին: Նրանք ղեկավարում էին գործակալությունները, որոնք թեմական վարչական միավորներ էին՝ կազմված միմյանց*

Ջրաբերդու հարիւր հատ. և ընդ նմանկի իմոյ առ Կառավարիչն Հոգևոր գործոց Շամախւոյ վիճակի՝ Մովսէս վարդապետն Մաղաքեանց եօթանասուն և երկու հատ, և 'ի Սինոդն Ս[ր]բ[ո]յ էջմիածնի 'ի ձեռն անդամոյ Դորին Կարապետ քահանային Հախեանց հինգ հարիւր հատ, 'ի կատարումն հրամանագրութեան Նորին առ Կանսիստորիայդ 'ի 11 Հոկտեմբերի 1857 ամի № 1923. և մնայ 'ի Տպարանի անդ առ տպագրիչ Մինասն Տառլիճեանց երեք հարիւր երեսուն և ութ հատ միայն: Գնահատեալ իմ զառաքեալ հատորսն առ յաջորդն Շաքւոյ իւրաքանչիւրն երեք ռուբլի, առ գործակալսն՝ երկու և կէս ռուբլի և առ Մովսէս վարդապետն երկու ռուբլի 60 կօպ. 'ի վաճառմանէ յորոց մինչև ցայսօր ընկալեալ եմ 'ի յիշեալ գործակալացն և 'ի յաջորդէն Նուխւոյ միայն զհինգ հարիւր ռուբլիս, զորս նոյնութեամբ յանձնեալ եմ Պ[ա]ր[ո]ն Խաչատրեանցին ձեռագրաւ 'ի հաշիւ հասանելեաց ինքեան հազար հարիւր քսան և հինգ ռուբլի գումարոյն ըստ պայմանագրութեանն: Ուստի առաքմամբ իսկական պայմանագրութի[ւնն] և ձեռագրի Պ[ա]ր[ո]ն Խաչատրեանցի 'ի տես Կանսիստորիդ, յառաջադրեմ Դմին փութով տնօրինել զարժանն վասն 'ի վաճառ հանելոյ և զմնացեալ 'ի տպարանի անդ մաշտոցսն, և 'ի գնոյ նոցին լցուցանելոյ զբոլոր գումարն հասանելեաց Պ[ա]ր[ո]ն Խաչատրեանցին, յանձնելով զայն 'ի դէպս բացակայութեան Նորին՝ Աղայ Կարապետի Շահմուրատեանց ընդ ստորագրութեամբ նորա և զմնացորդն թողուլ յօգուտ յիշեալ Տպարանին»: — Եւ 'ի պայմանագրի անդ գրի այսպ[է]ս՝ «'Ի 1. Մարտի 1858 ամի ես 'ի ներքոյ ստորագրեալ Շուշաքաղաքացի Գրիգոր Առաքելեանս Խաչատրեանց տամ զայս կապակցութեան թուղթ Բարձր Սրբազան Վիճակաւոր Առաջնորդին Ղարաբաղու Տ[եառ]ն Գէորգ Եպիսկոպոսի Վեհապետեանց և Ասպետի վասն այն, թէ՝ պարտաւորիմ ես սկսեալ 'ի վերոյ նշանակեալ թուոյն մինչև ցվեց ամիս ժամանակն տպագրել տալ յԱթոռապատկան տպարանի տեղւոյս ի վ[ե]ր[այ] մաքուր սպիտակ (կլանի) թղթոյ[24] և գեղեցիկ կազմուածով վերջաւորել զհազար ե[ր]կու հարիւր յիսուն հատ մաշտոցս ըստ մի և նոյն օրինակի տպագրելոցն 'ի 1840 ամի: Ամ[ենայն] ծախքն տպագրութեան և այլոց 'ի պէտս յիշեալ մաշտոցացն պարտի լինիլ 'ի սեպհականու[թեն]է իմմէ, մի միայն վարձ տանն, յորում զետեղեալ է տպարանն, պարտի լինիլ 'ի կողմանէ Նորին Բարձր Սրբազնու[թ]ե[ան]ն և գործադրու[թ]ե[ան]ն տպարանական պարագայից, այն է՝ տառից, աղիւսակաց, և այլոց այսպիսեաց,

հարևանությամբ գտնվող մեկ տանյակից ավելի եկեղեցիներից՝ իրենց ծխական համայնքներով: Ծխական համայնքները եկեղեցավարչական ամենափոքր միավորներն էին, իսկ ամենախոշորները՝ փոխանորդությունները: Գործակալությունները լինում էին ինչպես առանձին, այնպես էլ փոխանորդությունների կազմում: Գործակալներին նշանակում և ազատում էր թեմական առաջնորդը [հմմտ. Վ. Գրիգորյան. Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի գործակալությունների կառավարումը XIX դարի 30-ական թվականներին – XX դարի սկզբին. – «Երիտասարդական 3-րդ գիտաժողովի զեկուցումներ» (Երևան), 2018, էջ 222–223]:

[24] *«Ձեռաց Մաշտոցի» որոշ էջեր ունեն տպագրական դրոշմանշաններ՝ այդ ժամանակաշրջանում Ռուսական կայսրությունում գործող տպագրական թղթի մի քանի գործարանների անուններով:*

որք կան արդէն 'ի պատրաստի 'ի տպարանի անդ, պարտի լինիլ առանց վարձուց: Յետ անցանելոյ նշանակեալ վեց ամսոց և վերջանալոյ պայմանեալ տպագրու[թ]ի[ւն]ն, պարտաւոր եմ զհազար երկու հարիւր յիսուն մաշտոցսն յանձնել Նորին Բարձր Սրբազնութեանն և ստանալ 'ի նմանէ 'ի գին իւրաքանչիւր մաշտոցի զիննսուն կօպ. արծ[աթեայ]. այն է՝ 'ի գին ամենիցն զհազար հարիւր քսան հինգ րուբլիս արծ[աթոյ]: Առ որ և ստորագրեմ վկայութեամբ քանի մի պատուելի անձանց – Գրիգոր Խաչատրեանց: Վկայեմ Կարապետ Շահմուրատեանց»: Իսկ ձեռագիրն Գրիգորի Խաչատրեանց վ[ա]ս[ն] ստացման 500 րուբ. դրամոցն՝ գրեալ է օրինակ զայս՝ «'Ի 20 Յունվարի 1859 ամի ստորագրեալս 'ի ներքոյ Շուշաքաղաքացի Գրիգորս Խաչատրեանց ըստ պայմանագրութեան՝ տուելոյ Տ[եառ]ն վիճակաւորին Հայոց Ղարաբաղայ Սրբազան Գէորգ Եպիսկոպոսի Վեհապետեանց վ[ա]ս[ն] տպագրութեան նորատիպ մաշտոցաց 'ի տպարանին Մայր Աթոռոյ Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի 'ի Շուշի ծախուք իմովք, 'ի հաշիւ հասանելի ինձ դրամոց ըստ թուոյ մի հազար երկու հարիւր յիսուն հատից, ընկալայ 'ի նորին Բարձր Սրբազնու[թեն]է միայն զհինգ հարիւր րուբլիս արծաթոյ, որում վ[ա]ս[ն] միամտութեան և ապագայ հաշուէտեսութեան տամ զայս իմով սեպհական ստորագրութեամբ: Գրիգոր Խաչատրեանց»: Հինգերորդ՝ 'ի հետ[և]ումն այսորիկ Կոնսիստորիայս ըստ զօրութեան օրագրական սահմանադրութեան իւրոյ, կայացելոյ 'ի 25 Մարտի 1859 ամի, զմնացեալ 'ի տպարանի վիճակիս զ338 հատ մաշտոցսն ընկալաւ յիւր տեսչութիւն. ընդ նմին և յիշեալ գործակալացն Վարանդու և Ջրաբերդու և յաջորդին Նուխւոյ հրամանագրեաց, իսկ 'ի Մովսէս վարդապետէն խնդրեաց գրութեամբ, փութով հաղորդել սմին զտեղեկութիւնս, թէ՝ նոքա ո՞րքան դրամս են առաքեալ ցայսօր առ Գէորգ Եպիսկոպոսն, 'ի գին ո՞րքան յատկապ[է]ս մաշտոցաց, և ո՞րքան մնայ տակաւին: Առ այս գործակալն Վարանդու յայտարարու[թեամ]ք 'ի 15 Մայիսի հ[ա]մ[ա]ր[ա]ւ 44, ետ Կանսիստորիիս զտեղեկութիւն, թէ՝ 'ի հարիւր քառասուն հատ մաշտոցացն ինքն վաճառեալ է 'ի վ[ե]ր[այ] քահանայից և եկեղեցեացն Վարանդու զ139 հատորս, իւրաքանչիւրն 2. րուբ. 50 կօպէկօք, ընդ ամէնն՝ 347 րուբ. 50 կօպ. և մի հատորն մնացեալ է առ Անդամոյ Սորին Գէորգ վարդապետին Արամեանց: 'Ի յիշեալ դրամոցն զ325 րուբլիսն մատուցեալ է Նորին Սրբազնութեանն, իսկ զ22 րուբ. 50 կօպէկսն ծախեալ է նա 'ի գին գարւոյ և յարդի 'ի պէտս երիվարաց և դրաստուց ն[ո]ր[ա], եղելոց 'ի վանսն Ամարասայ: Գործակալն Ջրաբերդու յայտարարութեամբ 'ի 25 Յունիսի անցեալ ամի հ[ա]մ[ա]ր[ա]ւ 63, յայտնեաց Ատենիս, թէ՝ նախորդն ն[ո]ր[ա] Անդրէաս վարդապետն զհարիւր հատոր մաշտոցս վաճառեալ է 'ի վերայ քահանայից և եկեղեցեաց ըստ իւրոյ տեսչութեան իւրաքանչիւրն 2. րուբ. 50 կօպ. արծ[աթեայ]. ընդ ամէնն՝ 250 րուբ. և զայս գումար դրամոց մատուցեալ է նա Սրբազան Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ին ընդ յայտարարութեան 'ի 10 Հոկտեմբերի 1858 ամի հ[ա]մ[ա]ր[ա]ւ 120, և վասն ստացման դրամոցն այնոցիկ նա ստորագրեալ է 'ի յղելի թղթոց տետրակի գործակալութեանն վ[ա]ս[ն] 1858 ամի: Իսկ Վիճակային Հայոց Կանսիստորիայն Շամախւոյ ընդ գրութեան 'ի 15 Յուլիսի նոյն ամի հ[ա]մ[ա]ր[ա]ւ 664, վերադարձուցեալ էր 'ի Կանսիստորիայս զվերոյիշատակեալ 72. հատ մաշտոցսն 'ի պատճառս

անհնարաւորութեանն վ[ա]ճ[ա]ռմ[ա]ն այնոցունց 'ի վիճակի անդ: Եւ 'ի վերջոյ՝ յաջորդն Շաքւոյ Կարապետ վարդապետն Միրզաբէկեանց յայտարարու[թեամ]ը իւրով ի 5./այսր/ Դեկտեմբերի հ[ա]մ[ա]ր[ա]ւ 47, յայտ առնէ Կանսիստորիիս, թէ՝ 'ի հարիւր հատ մաշտոցացն, առաքելոց առ նա 'ի Սրբազան Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]էն, զերեսուն վեց հատորսն վաճառեալ է ինքն՝ իւրաքանչիւրն երեք րուբլւովք, ընդ ամէնն՝ 108 րուբլւոյ արծ[աթոյ]. զորս թէպէտ նա առաքեալ է 'ի Կանսիստորիայս Ղարաբաղու ընդ յայտարարութեան 'ի 25 Հոկտեմբերի անցեալ 1858 ամի N 80, սակայն զայնս ստացեալ է Նորին Սրբազնու[թ]ի[ւն]ն և վասն ստացմանն առաքեալ է առ նա յաջորդն զառաջադրութիւն իւր 'ի 5 Նոյեմբերի սոյն ամի հ[ա]մ[ա]ր[ա]ւ 151: Յետ այսորիկ վաճառեալ է նա յաջորդն 'ի մաշտոցաց անտի նաև զ31 հատորս, զորոց և զգինս, որ է 93 րուբ. արծ[աթոյ]. մատուցեալ ուղղակի Նորին Սրբազնութեանն ընդ յայտարարութեան 'ի 17 Յունվարի ներկայ 1859 ամի ընդ հ[ա]մ[ա]ր[ա]ւ 9, սակայն վասն ստացման սոյն դրամոց տակաւին ինքն չէ ստացեալ 'ի նմանէ զտեղեկութիւն ինչ: Բաց յայսմանէ վաճառեալ է նա նոյնպէս զեօթն հատ մաշտոց և զգինս նոցունց ընդ ամէնն՝ 21 րուբլի ընդ ներկայ յայտարարու[թեամ]ը իւրում, որ 'ի 5 նոյն Դեկտեմբերի N 47, մատուցեալ է Կանսիստորիիս ձեռամբ Յովհաննէս քահանային Մախմուրեանց: Ուստի և մնացեալ է առ ինքեան յաջորդին առանց վաճառման քսան և վեց մաշտոց: Վեցերորդ՝ որ ինչ վերաբերի առ այն թէ՝ Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ն ո՞րքան մաշտոցս է տպագրել տուեալ յօգուտ իւր՝ բաց 'ի վերոյ նշանակեալ 1250 հատորոցն, որո՞յ ծախուք արդեօք և ո՞ւր գտանին այժմ, չի՛ք յայսմ մասին տեղեկու[թ]ի[ւն]՝ ինչ 'ի գործս Կանսիստորիիս: – Այլ՝ որպ[է]ս յայտնեն Ատենակալքն Կանսիստորիիս, լուեալ է ն[ո]ց[ա], թէ՝ Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ն տուեալ է տպագրել առանձինն յօգուտ իւր զ250 հատոր մաշտոցս բաց 'ի վերոյ նշանակեալ 1250 հատորոցն: Ուստի և հարկաւոր դատեցաւ ըստ այսմ բանի հարցանել ո[ր]պ[է]ս զԽաչատուր քահանայն Ղալաբէկեանց, նոյնպ[է]ս՝ և զՇուշաքաղաքացի Մինասն Տառղիճեանց, որոց յայտնի են ամ[ենայն] հանգամանք տպագրութեան մաշտոց գրքուկացն, և նոքա յայնմ իսկ աւուր, այն է՝ յ30 Դեկտ[եմբերի] 1859 ամի ետուն զբացատրու[թ]ի[ւն]ս իւրեանց յԱտենի Կանսիստորիիս, յորոց առաջինն յայտնէ այսպ[է]ս՝ «Առ հարցումն Ատենակալաց Կանսիստորիիդ 'ի մասին հանգամանց տպագրու[թ]ե[ան] մաշտոց գրքուկացն ամենախոնարհաբար բացատրեմ զյետագայս – Նախկին Ատենապետն Կանսիստորիիդ Սրբազան Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ն և Անդամք Դորին յառաջին աւուրս Փետրվարի 1858 ամի, կոչեալ ինձ և Շուշաքաղաքացի Տ[ի]ր[ա]ց[ո]ւ Իսահակն Մախմուրեանց և Տ[ի]ր[ա]ց[ո]ւ Թէոսն Տ[է]ր Ա[ստուա]ծատրեան՝ յանձնեցին մեզ տպագրել 'ի տպարանի Մայր Աթոռոյն Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի, եղելոյ 'ի Շուշի քաղաքիս, զ1250 հատ մաշտոցս սեպհական ծախուք Հոգևոր Ատենիդ, խոստանալով ինձ և գործակցին իմոյ Մախմուրեանցին 'ի տարեկան վարձ իւրաքանչիւրոցն 75 րուբլի. 5 չեթվերթ ցորեան, իսկ Տէր Ա[ստուա]ծատրեային 'ի տարին 40 րուբլի և 3 չեթ[վերթ] ցորեան: Յետ այսորիկ ձեռնարկաք յայնժամ 'ի տպագրել զնշանակեալ 1250. հատոր մաշտոցսն, և ո[ր]պ[է]ս յայտնի է Ատենակալաց Հոգևոր Ատենիդ՝ տպագրեցաք մեք զութ տետրակս այնց

գրքուկաց՝ այն է մինչ ց66 երեսն: Զկնի անցանելոյ ամսաչափ ժ[ա]մ[ա]ն[ա]կի, առանց յայտնի մեզ պատճառաց՝ Նախկին Պաշտօնակատարն Վիճակաւոր Առաջնորդի թեմիս Ղարաբաղու Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ն դաշնադրեաց յիւրմէ կողմանէ ընդ Շուշաքաղաքացի Գրիգորի Խաչատրեանց, զի նա իւրով սեպհական ծախուք տպագրել տացէ ՝ի յիշեալ տպարանին զ1250 մաշտոցսն ընդ ձեռն Շուշաքաղաքացի տպագրիչ Մինասայ Տառղլիճեանց, զիւրաքանչիւր հատորն 90 կօպ. արծ[աթեայ]: Վ[ա]ս[ն] [որո]յ և Նորին Բարձր Սրբազնու[թ]ի[ւն]ն խափանեաց զտպագրու[թ]ի[ւ]ն մեր, և առաջադրեաց մեզ զբոլոր հաշիւս նոյն տպարանին և զտպագրեալ մեօք թերթսն մաշտոցացն այնոցիկ յանձնել ցուցակագրու[թեամ]ք նոյն Տառղլիճեանին, ուստի մեք առանց ընդդիմու[թ]ե[ան] կատարեցաք զայն պատուէր Նորին Սրբազնու[թ]ե[ան]: Եւ յետ այնորիկ եկեալ մեր առ Սրբազան Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ն յայտնեցաք թէ՝ զի՞նչ էր պատճառն, զի այդպ[է]ս՝ արարիք ընդ մեզ, մեք պատրաստ էաք տպագրել զայնոսիկ մաշտոցսն ծախուք Վիճակային Կանսիստորիին, ըստ որոյ իւրաքանչիւր հատորոյ ծախքն չունէր առաւելուլ քան զ50 կօպ. արծ[աթեայ]. այլ դուք ընդ հակառակն դաշնակցեալ էք ընդ Խաչատրեանին տպագրել տալ զիւրաքանչիւր հատն 90 կօպեկօք արծ[աթեայ]: Այլ նա յայսմ մասին ոչինչ տուե[ա]լ մեզ պատասխանի, հրամայեաց մեզ ստանալ ՝ի Կանսիստորիէդ մի միայն զամսական ութ ութ ռուբլի վարձսն մեր և ՝ի բաց հրաժարիլ յայնմ գործոյ, ո[ր]պ[էս] և եղև: Յաւելում և զայս յետ քանի մի ժամանակաց յայտնի եղև մեզ, թէ՝ իւրն Բարձր Սրբազանու[թ]ի[ւն] դաշնակցեալ է ընդ Խաչատրեանին տպագրել տալ ո՛չ թէ զ1250 հատոր մաշտոցս, այլ զ1500 հատորս, յորոց՝ որպ[է]ս գիտեմ, զ1250 հատորսն առաքեալ է Նորին Սրբազնու[թ]ի[ւն]ն առ զանազան գործակատար Հոգևոր անձինս վասն վաճառման յանուն Վիճակին, իսկ զմնացեալ 250 հատորսն ՝ի նոցունց բարձե[ա]լ է յօգուտ իւր ինքեան, այլ թէ ո՞ւր է առաքեալ զայնս՝ ոչ գիտեմ: Զայս ամ[ենայն] բացատրեալ ամ[ենայն] ճշմարտու[թեամ]ք և արդարու[թեամ]ք, յայնմ ստորագրեմ – Խաչատուր քահանայ Ղալաբէկեանց»: Իսկ երկրորդն յայտնէ այսպ[է]ս՝ «Առ հարցումն Ատենակալաց Դորին ՝ի մասին հանգամանաց մաշտոց գրքուկացն՝ ամենայարգոյաբար բացատրեմ զյետագայս – ՝ի 1858 ամի ՝ի Մարտ ամսեանն Շուշաքաղաքացի Պ[ա]ր[ո]ն Գրիգորն Խաչատրեանց պայմանագրաւ յանձնեաց ինձ տպագրել ՝ի տպարանի Մայր Աթոռոյն Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի, եղելոյ ՝ի Շուշի քաղաքիս, զ1500. հատ մաշտոցս իմով սեպհական ծախուք, իւրաքանչիւր հատն 90. կօպ. արծ[աթեայ]: Յետ վերջաւորելոյ իմ զտպագրու[թ]ի[ւն]ն այնոցիկ 1500. հատոր մաշտոցացն՝ յանձնեցի զայնոսիկ Պ[ա]ր[ո]ն Խաչատրեանցին և ստացայ ՝ի նմանէ զ1350 ռուբլի վարձսն տպագրու[թ]ե[ան] իմոյ: Իսկ նա Պ[ա]ր[ո]ն Գրիգորն Խաչատրեանց յետ ստանալոյ յինէն ըստ պայմանագրին մերում զյիշեալ քանակու[թ]ի[ւն]սն մաշտոցաց, յայտնեաց զայնմանէ Սրբազան Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ին Վեհապետե[ա]նց, և Նորին Սրբազնու[թ]ի[ւն]ն յայնժամ կարգադրեալ յիւրմէ կողմանէ առաքեաց յայնոցիկ գրքուկացն առ ՝ի վաճառ անցուցանելոյ՝ զ100 հատ ՝ի Նուխի քաղաք՝ առ յաջորդ Կարապետ վարդապետն, զ100 հատ առ գործակալն Ջրաբերդու, զ140 հատ առ

գործակալն Վար[ա]նդու, զ72 հատ առ կառավարիչն Շամախւոյ Վիճակի Մովսէս վարդապետն Մաղաքեանց. զ200 հատ 'ի Թիֆլիզ՝ առ Գրիգոր քահանայ Տ[է]ր Բարսղեանց, զ50 հատ յելիսավետապոլ առ նախկին յաջորդն տեղւոյն հանգուցեալ արդէն Կարապետ վարդապետն, իսկ զ338 հատ մաշտոցսն ստացեալ է յայսմ ամի 'ի Մարտ ամսեանն Անդամ Կանսիստորիիդ Սիմէօն քահանայն Տ[է]ր Իսրայէլեանց, բաց յայսց ամենից առաքեալ է 'ի Սինօդն Ս[ր]բ[ո]յ էջմիածնի զ500 հատ: Այլ թէ՝ 'ի վերոյ նշանակեալ 1500 հատ մաշտոցացն ո՞րքան էր 'ի հաշիւ Վիճակային կանսիստորիիդ և ո՞րքան յօգուտ Սրբազան Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ին, ես ո՛չ գիտեմ յատկապ[է]ս: Զայս ամ[ենայն] բացատրեալ ամ[ենայն] ճշմարտու[թեամ]բ վ[ա]ս[ն] [որո]յ և ստորագրեմ – Մինաս Տառղլիճեանց»: ՍԱՀՄԱՆԵՑԻՆ – 'ի վերոյ գծագրեալ հանգամանաց գործոյս պարզապ[է]ս տեսանի, նախ՝ թէ՝ Լուսաւորչական Հայոց Սինօդդ Ս[ր]բ[ո]յ էջմիածնի թէպէտ թոյլատրեալ էր Կանսիստորիիս տպագրել տալ ծախուք Վիճակային արդեանց զհազար հատ մաշտոց գրքոյկս, յորոց և զ500 հատորս առաքել 'ի Սինօդդ, և զմնացեալ 500 հատորսն թողուլ 'ի Կանսիստորիիս 'ի լրումն պակասու[թ]ե[ան] եկեղեցեաց թեմիս, սակայն Հոգևոր Ատեանս համաձայն նախենթադատու[թ]ե[ան] Ատենապետի և անդամոց իւրոց բարւոք էր համարեալ տպագրել տալ յայնց գրքուկաց ընդ ձեռն Խաչատուր քահանային Ղալաբէկեանց և երկուց օգնականաց ն[ո]ր[ա] զ1250 հատորս[25], այնու դիտմամբ, զի զկնի մատուցման Սինօդդ Ս[ր]բ[ո]յ էջմիածնի պահանջեալ 500 հատորոցն, 'ի վաճառմանէ մնացեալ 750 հատորոցն հնարաւոր լիցի լրացուցանել զգումարն ծախուց Վիճակային արդեանց, (որ չունէր առաւելուլ քան զ650 ռուբլի արծ. ամ[ենայն] պարագայիւքն, ըստ որում յիշեալ Խաչատուր քահանայն յօժար էր յայնժամ տպագրել զիւրաքանչիւր հատորն յիսուն կոպ. արծ. դրամօք[26], ո[ր]պ[էս] և 'ի բացատրու[թ]ե[ան]ն իւրում խոստովանի ճշմարտու[թեամ]ք) և զաւելորդ շահն թողուլ յօգուտ Հոգևոր Ուսումնարանին Ղարաբաղու և մասամբ ինչ Աթոռապատկան տպարանին: Այլ 'ի վ[ե]ր[այ] այսր ամ[ենայնի]՝ Սրբազան Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ն յետ

---

[25] *Գէորգ եպիսկոպոսի բացատրագիրն առանձին վավերագրի տեսքով մեզ հայտնի չէ. այն գտել ենք մեկ այլ վավերագրի բովանդակության մեջ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3888, թ. 98–101), ուստի նպատակահարմար չգտանք տպագրել սույն հրապարակման մեջ: Բացատրագրում նա հայտնում էր, որ թեև ինքը սկզբից հանձնարարել էր Խաչատուր քահանա Ղալաբեկյանցին և նրա երկու գործակիցներին «Ձեռաց Մաշտոցը» տպագրել 1250 տպաքանակով, սակայն իր հանձնարարությունը մեկ ամիս անց կասեցրել է: Նա պատճառաբանում էր, որ Խաչատուր քահանան ծանրաբեռնված էր հովվական ծառայությամբ և ծիսական պարտականություններով, ուստի չէր կարող կարճ ժամանակում գլուխ բերել դրա տպագրությունը (տե՛ս նույն տեղում, թ. 99):*

[26] *50 կոպեկ արժողությամբ «Ձեռաց Մաշտոց» գրքերից յուրաքանչյուրը տպագրելու մասին Խաչատուր քահանա Ղալաբեկյանցի հայտնած առաջարկության առնչությամբ Գէորգ եպիսկոպոսը իր բացատրագրում պնդում էր, որ ինքը խղճահարությունից դրդված չի ցանկացել տպագրական գործի շարունակությունը թողնել Խաչատուր քահանային՝ հաշվի առնելով նաև նրա նյութական դժվարությունները (տե՛ս նույն տեղում, թ. 99 շրջ.):*

այսօրինակ տնօրէնու[թ]ե[ան] Կանսիստորիիս և յետ շարունակու[թ]ե[ան] տպագրու[թ]ե[ան] այնոցունց գրքուկաց ընդ ձեռն յիշեալ անձանց յընթացս ամսաչափ ժամանակի մինչև ց66 երեսն ըստ հաշուոյ 1250 հատորոց, ապաքէն վ[ա]ս[ն] անձնական շահուն իւրոյ միայն՝ արհամարհելով զայս ամ[ենայն]՝ ինքնակամ պայմանադրեալ է գրաւոր ընդ Շուշաքաղաքացի Գրիգորին Խաչատրեանց[27] *տպագրել տալ գնոյնչափ հատոր մաշտոցս, այն է՝ զ1250 հատորս, այլ բանաւոր և գաղտնի դաշամբ պարտաւորեալ է գնա տպագրել տալ զ1500 հատորս, յորոց 1250 հատորն յօգուտ Վիճակիս և Մայր Աթոռոյն Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի, իսկ մնացեալ 250 հատորն յօգուտ ինքեան, խոստանալով հատուցանել վասն իւրաքանչիւր հատորոցն զ90 կօպ. արծ. դրամս, այն է՝ 40 կոպեկօք աւելի քան զայն, որով յօժարիւր և թախանձանօք աղաչէր Խաչատուր ք[ա]հ[ա]ն[ա]յն Ղալաբէկեանց տպագրել զիւրաքանչիւր հատորն 'ի նոցունց: Եւ ըստ սմին հաշուոյ վնասն Վիճակին ըստ այսմ տպագրու[թ]ե[ան] է հինգ հարիւր ռուբլի արծ.*[28]*: Երկր[որ]դ՝ Սրբազան Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ն առաջադրու[թեամ]ը իւրով յ31. Յունվարի 1859 ամի հ[ա]մ[ա]ր 11, տալով Կանսիստորիիս գծանօթու[թ]ի[ւն]ս զարարեալ իւր և տնօրէնութեանցն յայնմ թէ՝ ո՛ւր և առ ո՛ զո՞րքան հատոր մաշտոցս է առաքեալ ինքն. և ո՛րքան է մնացեալ աստանօր, – 'ի միջի այլոց ծանուցեալ է, թէ՝ ինքն մինչև ցայն վայր ստացեալ է 'ի գնոյ վաճառեալ մաշտոցացն միայն զ500 ռուբլիս արծ. զորս և հատուցեալ է Պ[ա]ր[ո]ն Գրիգորին Խաչատրեանց 'ի հաշիւ հասանելի նմա 1125 ռուբ. գումարոյն 'ի վարձ տպագրու[թ]ե[ան] 1250 հատոր մաշտոցացն. ընդ նմին և պատուիրեալ է Կանսիստորիիս լրացուցանել յիշեալ Խաչատրեանին կ[ա]մ հաւատարմի ն[ո]ր[այ]*

---

[27] *Գևորգ եպիսկոպոսը բացատրագրում պնդում էր, որ թեմական գանձարանում բավարար գումար չկար «Ձեռաց Մաշտոցի» տպագրությունն իրականացնելու համար: Ուստի խուսափելով այսպիսի դժվարություններից և Հոգևոր ատյանն ավելորդ պարտքերի մեջ չծանրաբեռնելու համար՝ որոշեց տպագրությունն ավարտելու համար գործակցել շուշեցի Գրիգոր Խաչատրյանցի հետ (տե՛ս նույն տեղում, թ. 99):*

[28] *«Ձեռաց Մաշտոց» գրքի յուրաքանչյուր օրինակը 50 կոպեկի փոխարեն 90 կոպեկով տպագրելու արդյունքում Ղարաբաղի կոնսիստորիան Գևորգ եպիսկոպոսից պահանջում էր 500 ռուբլու վնասի փոխհատուցում: Վերջինս չէր կամենում այդ գումարը վճարել իր գրպանից, քանի որ չէր ընդունում «Ձեռաց Մաշտոց» գրքի յուրաքանչյուր օրինակի տպագրությունը 90 կոպեկով իրականացնելու դեպքում ինքը վնաս է պատճառել թեմական գանձանակին՝ 50 կոպեկով տպագրելու առաջարկն իրատեսական չհամարելով: Գևորգ եպիսկոպոսը հույս էր հայտնում, որ Էջմիածնի Սինոդն արդարացի լուծում կտար և իրենից չէր գանձի կոնսիստորիայի պահանջած 500 ռուբլի փոխհատուցումը: Ավելին՝ նրա կարծիքով «Ձեռաց Մաշտոց» գրքի տպագրությունից շահել է ինչպես Էջմիածնի Մայր Աթոռը՝ ստանալով 500 օրինակ, այնպես էլ՝ Ղարաբաղի հայոց թեմը, որին բաժին էր հասել 750 օրինակ: Գևորգ եպիսկոպոսի պնդմամբ՝ «Ձեռաց Մաշտոցի» յուրաքանչյուր օրինակը 2,5 ռուբլի գնով վաճառելու դեպքում խոշոր շահույթ կստանային թե՛ Մայր Աթոռը (2,5 ռուբլի x 500 օրինակ = 1250 ռուբլի) և թե՛ Ղարաբաղի թեմը [(2,5 ռուբլի-90 կոպ.) x 750 օրինակ = 1200 ռուբլի] (տե՛ս նույն տեղում, թ. 100 և շրջ.):*

Պ[ա]ր[ո]ն Շահմուրատեանին, զմնացեալ 625 ռուբլի արծ. դրամսն 'ի գնոյ անվաճառ մն[ա]ցեալ գրքուկացն: Բայց այսու ամ[ենայն]իւ՝ ո[ր]պ[էս] բացայայտ տեսանի 'ի յայտարարու[թ]ե[ան]ց գործակալացն Վարանդու և Ջրաբերդու և յաջորդին Շաքւոյ, նա Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ն ստացեալ է 'ի գին վաճառեալ մաշտոցաց 'ի յիշեալ ստորագրելոց զ798 ռուբ. 50 կօպ. այն է՝ աւելի քան զցուցեալն իւրև 298 ռուբ. և 50 կօպ. արծ. և այս գումար ցայսօր ժամանակի գտանի առ նմա: Երր[որ]դ՝ թէ՝ վերոյիշեալ 250 հատոր մաշտոց գրեանքն ըստ վերջին գնահատու[թ]ե[ան]ն, (այն է՝ իւրաքանչիւրն 2 ռուբ. 50 կօպ.), նշանակելոյ ի Նորին Սրբազնու[թեն]էն, ունին զարժէս 625 ռուբլւոյ արծ. և յայնցանէ վասն վաճառման առաքեալ է նա առ Գրիգոր ք[ա]հ[ա]ն[ա]յն Տ[է]ր Բարսղեան Թիֆլիզեցի զ200 հատոր և առ նախկին յաջորդն Ելիսաւետօպոլու հանգ[ո]ւցե[ա]լ արդէն Կարապետ վարդապետն զ50 հատ: Զորր[որ]դ՝ 'ի թուոյ 750 հատ մաշտոցացն, տպագրելոց յօգուտ Վիճակիս, այժմ գտանին անվաճառ 26 հատ առ յաջորդին Շաքւոյ Կարապետ վարդապետին Միրզաբէկեանց, 1. հատ առ Անդամոյ սորին Գէորգ վարդապետին Արամե[ա]նց և 410 հատ 'ի Կանսիստորիիս, բոլորն 437 հատ, որոց գինն՝ եթէ վաճառեսցին այնոքիկ 2 ռուբ. 50 կօպ. արծ. առ իւրաքանչիւր հատորն, լինի ընդ ամէնն՝ 1117 ռուբ. 50 կօպ. յորոց վ[ե]ր[այ] յաւելեալ զ798 ռուբ. 50 կօպ. դրամսն 'ի գին 313. հատոր մաշտոցացն, ցարդ վաճառելոց ընդ ձեռն գործակալացն Վարանդու և Ջրաբերդու և յաջորդին Նուխւոյ, զորս և ստացեալ է Սրբազան Գէորգ Եպ[ի]ս[կոպոս]ն՝ լինի բոլորն 'ի միասին 1916 ռուբլի արծ. յորմէ հանեալ զ1125 ռուբ. գումարն ծախուց 'ի պէտս տպագրու[թ]ե[ան] 1250 հատոր մաշտոցացն՝ ունի մնալ յօգուտ Վիճակին 791 ռուբ. և յայսմանէ հանեալ զգումարն դրամոց, ծախելոց 'ի վիճակային արդեանց 'ի վարձ Խաչատուր քահանային Ղալաբէկեանց և երկուց օգնականաց ն[ո]ր[ա], նոյնպ[է]ս և ի գին արկղաց, պարանաց և 'ի վարձ բեռնակիր դրաստուց 'ի ժամ առաքելոց զ500 հատոր մաշտոցսն 'ի Ս[ուր]բ Էջմիածին, որ է 55 ռուբլի 21. կօպէկ,- մնայ 'ի վերջոյ 735 ռուբ. 79 կօպ.: Վ[ա]ս[ն] [որո]յ և Վիճակային Հոգևոր Ատեանս արժան վարկանի ըստ վերոյ գծագրեալ հանգամանացն առնել զյետագայս – Նախ՝ բոլորագրու[թեամ]բ վերոյ բացատրեալ հանգամանաց խնդրել ամենախոնարհաբար 'ի Լուսաւորչական Հայոց Սինոդէդ Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի բարեհաճել յետս ստանալ 'ի Սրբազան Գէորգ Եպիսկոպոսէն Վեհապետեանց զ298 ռուբ. 50 կօպ. արծ. դրամսն, մնացեալս առ նմա 'ի գումարացն մատուցելոց նմա 'ի գործակալացն Վարանդու և Ջրաբերդու և 'ի յաջորդէն Շաքւոյ, 'ի գին վաճառեալ ընդ ձեռն ն[ո]ց[ա] մաշտոց գրքուկացն: Նոյնպէս և պահանջել 'ի Նորին Սրբազնու[թեն]էն զ500. ռուբլի դրամս, որչափ գումարաւ նա ինքն վնասակար է գտեալ օգտի Վիճակիս փոխանակ 50 կօպէկի 90. կօպէկի տպագրել տալովն զիւրաքանչիւր հատորն 1250. մաշտոց գրքուկացն,- և կամ հրամայել նմա զ250. հատոր մաշտոցսն, տպագրել տուեալս յօգուտ իւր՝ դարձուցանել յօգուտ Վիճակիս[29]: Երկրորդ՝ որովհետև 'ի վերայ բոլոր եկեղեցեաց և

[29] Ինչ վերաբերում է «Ձեռաց Մաշտոց» գրքի՝ Գևորգ եպիսկոպոսի մոտ մնացած հավելյալ և գաղտնի տպագրված 250 օրինակներին, հարկ է նշել, որ նա

քահանայից Վիճակիս Ղարաբաղու արդէն բաժանեալ են մաշտոց գիրք, և չի՛ք այլևս հնարաւորութիւն ինչ յայսմ Վիճակի վաճառելոյ 'ի մնացեալ 410 մաշտոցացն, վ[ա]ս[ն] [որո]յ խնդրել 'ի Սինոդէդ Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի առնել զպատշաճաւորն տնօրէնութիւն վասն վաճառման այնոցիկ յայլ վիճակն Հայոց 'ի Ռուսաստան, ուր գտցին կարօտութիւնք այնպիսեաց: Երրորդ՝ ըստ որում 'ի ներկայ ժամանակի չգտանի 'ի Կանսիստորիիս գումար ինչ նշանաւոր 'ի գնոյ մաշտոցաց, վ[ա]ս[ն] [որո]յ և զվճարումն Պ[ա]ր[ո]ն Գրիգորի Խաչատրեանց մնացեալ 625. ռուբլի դրամոց 'ի լրումն պայմանեալ գումարոյն 'ի գին տպագրութեան 1250. Մաշտոցացն՝ թողուլ մինչև ցբոլորովին վաճառումն այնց գրքուկաց և ցստացումն 'ի Սրբազան Գէորգ Եպիսկոպոսէն վերոյ նշանակեալ գումարացն դրամոց[30]: Եւ Զորրորդ՝ զամ[ենայն] յառաջ բերեալ 'ի Կանսիստորիէս տեղեկութեանցն 'ի գործոյն և զներկայ արարեալ տնօրէնութեանց Հոգևոր Ատենիս ծանուցանել հաղորդագրութեամբ Քննչիս Հոգևոր գործոց Վիճակիս Ղարաբաղու Բարձր Արժանապատիւ Դանիէլ վարդապետին Շահնազարեանց 'ի կատարումն պահանջման նորա առաջին պարբերութեամբն գրութեան իւրոյ 'ի 23 այսր Դեկտեմբերի Հ[ա]մ[ա]ր 22:

Անդամք Կանսիստորիիս Գէորգ վ[ա]րդ[ա]պ[ե]տ Արամե[ան]ց
Գրիգոր Աւագ քահ[ա]ն[ա]յ
Սիմէօն քահ[ա]ն[ա]յ Տ[է]ր Իսրայէլեանց
Յոհաննէս ք[ա]հ[ա]ն[ա]յ տ[է]ր Գաբրիէլեանց

Հ[ա]մ[ա]ր 35.
Յամի ազգական ՌՅԹ.
և փրկչական 1860.
յ9. Յունվարի[31]
'ի Ք. Շուշի:

Ատենադպիր Յ. Շահնազ[ա]ր[ան]ց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3888, թ. 22–27 շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

խնդրել էր Գրիգոր Խաչատրյանցին հոգալ նաև դրանց տպագրության ծախսը՝ խոստանալով 200 օրինակի վաճառքից ստացված գումարով մարել իր պարտքը՝ տոկոսներով հանդերձ, իսկ մնացած 50 օրինակի վաճառքից գոյացած գումարը կամ հենց 50 օրինակ գրքերը տալ կոնսիստորիային՝ որպես վարձատրություն Շուշիի տպարանին (տե՛ս նույն տեղում, թ. 100 շրջ.):

[30] Գևորգ եպիսկոպոսը բացատրագրում կոնսիստորիային հայտնում էր, որ ինքը Գ. Խաչատրյանցին «Ձեռաց Մաշտոց» գրքի տպագրության համար 625 ռուբլի պարտքից հանձնել է 298 ռուբլի 50 կոպեկ գումար՝ հավաստիացնելով, թե պարտքը մնացել է 327 ռուբլի: Կոնսիստորիան Գևորգ եպիսկոպոսից պահանջում էր ներկայացնել նաև վճարման անդորրագրերը, որոնց փոխանցումը նա անհարկի ձգձգում էր (տե՛ս նույն տեղում, թ. 99 շրջ.):

[31] Սույն գրությունը Էջմիածնի Սինոդում ստացվել է 1860 թ. փետրվարի 5-ին, որի մասին վավերագրի սկզբում կա հետևյալ նշումը. «'Ի 5 Փետրվարի 1860 ամի ստ[ա]ցե[ա]լ»: